

Կ-877³-22.10.2015,03.11.2015-SՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

«ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակցիզային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի հուլիսի 7-ի ՀՕ-79 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «գ» կետով.

«գ) ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների մատակարարումը օդանավակայանում գործող անմաքս առևտրի խանութի կազմակերպչին»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների դրոշմավորման և վերադրոշմավորման կանոնները (այդ թվում՝ ակցիզային դրոշմանիշի փակցման տեղը) սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»,

2) ուժը կորցրած ճանաչել 1.1-րդ մասի 2-րդ կետը,

3) 1.2-րդ մասում «դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից, կամ» բառերը փոխարինել «հարկ վճարողի» բառերով, իսկ «գերավճարի գումարին կամ» բառերը հանել,

4) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Ակցիզային դրոշմանիշերը կորցնելու կամ վնասվելու փաստն արձանագրելու (ստուգման (ուսումնասիրության, օպերատիվ-հետախուզական միջոցառումների) արդյունքներով արձանագրության կազմման կամ հարկ վճարողի կողմից դիմումի ներկայացման) օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում հարկ վճարողը նույն ակցիզային

դրոշմանիշերի տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով գումար է վճարում պետական բյուջե:»,

5) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Չօգտագործված կամ վնասված ակցիզային դրոշմանիշերի վերադարձը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ժամկետից ուշացնելու կամ սույն հոդվածի 4-րդ մասում սահմանած դեպքերում տարածքային հարկային տեսչությունների կամ տարածաշրջանային մաքսատան կողմից օրենքով սահմանված դեպքերում հետ չընդունվելու կամ ակցիզային դրոշմանիշերի կորստի դեպքերում չվերադարձված կամ հետ չընդունված կամ կորցրած ակցիզային դրոշմանիշերի թվին, տեսակին և տարողությանը համապատասխան պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքների համար սույն օրենքով սահմանված կարգով վճարվում է ակցիզային հարկ:»,

6) 11-րդ մասից հանել «հատկացվող դրոշմանիշերի թվին համապատասխան՝ ներմուծողի կողմից վճարած գումարի վճարումը հավաստող փաստաթղթի առկայության դեպքում,» բառերը,

7) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«12. Հարկ վճարողը կիրառությունից դուրս եկած ակցիզային դրոշմանիշերի տպագրության համար պետության կատարած ծախսերի չափով գումար է վճարում պետական բյուջե՝ դրանց կիրառությունից դուրս գալու օրվան հաջորդող 20 օրվա ընթացքում:»,

8) 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«13. Սույն հոդվածի 2-րդ և 12-րդ մասերով սահմանված վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում են տույժեր՝ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված 3. Օրենքի 8-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասում «յուրաքանչյուր ամիսը» բառերը փոխարինել «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով սահմանված ժամանակաշրջանը» բառերով:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված վճարողները ակցիզային հարկի հաշվարկներ չեն ներկայացնում և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, վճարում են ակցիզային հարկը և դրա հաշվարկման վերաբերյալ տեղեկություններն արտացոլում են ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկում:»:

3) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

4) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«8. Սույն օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքում ակցիզային հարկը վճարվում է օրենքով սահմանված ակցիզային հարկի վճարման ժամկետում:

Ակցիզային դրոշմանիշերի յուրաքանչյուր նմուշի տպագրության համար պետության կատարած ծախսերի չափի վերաբերյալ տեղեկանքը հարկ վճարողին տրվում է համապատասխանաբար հարկային և մաքսային մարմինների կողմից՝ հարկ վճարողի պահանջով: Տեղեկանքը տրվում է հարկ վճարողի դիմումի ստացմանը հաջորդող 15-րդ օրվանից ոչ ուշ»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ենթակա են հաշվանցման՝ այդ անձանց հարկային այլ պարտավորությունների հաշվին, կամ վերադարձման՝ օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը փոխարինել «մուտքագրվում են միասնական հաշվին» բառերով,

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից բացառությամբ 1-ին հոդվածի:

Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից, իսկ գործողությունը տարածվում է 2015 թվականի հունվարի 2-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կատարված առաջարկությունների և փոփոխությունների

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է ՓՄՁ սուբյեկտների կողմից շահագործվող հին սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաները նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաներով փոխարինելու վերջնաժամկետը 2016 թվականի հունվարի 1-ի փոխարեն սահմանել 2017 թվականի հունվարի 1-ը:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում:
«Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»		
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Առաջարկվում է հարկ վճարողներին թույլ տալ շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող, եթե նրանց փոխկապակցված անձինք որևէ գործունեություն չեն իրականացրել:	Նախագծում կատարվել է համապատասխան լրացում: